Հավելված 7
«ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/4-»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

<<ՆԻԿՈԼԱՅ ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԿ>>ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/4-4>>

«26» փետրվար 2018թ.

ք. Նոյեմբերյան

<<Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>>ՓԲԸ -Ն, ի դեմս տնօրեն Գարունիկ Ղուշչյանի, որը գործում է <<Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>> ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Նատալի Ֆարմ>>ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է <<Նատալի Ֆարմ>>ՍՊԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը,

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից,

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը,

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ ապրանք ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափը, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Հրաժարվել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ընդունել ապրանքը միայն համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

2.1.10 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով պայմանագիր կնքելու դեպքում կգործի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից կնքած պայմանագիրը:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ նկատելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **2 119 822.7** (երկու միլիոն հարյուր տասնինը հազար ութ հարյուր քսաներկու դրամ յոթ լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացող բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն՝ ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի Կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

<< Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>>ՓԲԸ
Ք.Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15
<<ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկ>>ՓԲԸ Նոյեմբերյանի մասնաճյուղ Հ/Հ
22 15140084000[illegible]
ՀՎՀՀ 0740479[illegible]

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ»ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա. Վասարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված
«26» փետրվարի 2018 թ. կնքված
<<ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/4>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

<< դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորագինը/<< դրամ	ընդհանուր գինը/<< դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
3	33671114	Ամինոֆիլին 2,4% 5,0		Ամինոֆիլին, Aminophylline լուծույթ ներարկման 24մգ/մլ, 5մլ	սրվակ	37.2	76260	2050	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
4	33671114	Ամինոֆիլին 0,15		Ամինոֆիլին, Aminophylline դեղահատ 150մգ	դեղահատ	3.85	11550	3000	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
5	33671115	Սուլֆոկամֆոկային 10% 2մլ		Սուլֆոկամֆոկային 10% 2մլ	սրվակ	55.9	13975	250	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
7	33671125	Ամբրոքսոլ օշարակ 15մգ/5մլ 100մլ		Ամբրոքսոլ, ն ambroxol, օշարակ 15մգ/5մլ 100մլ	սրվակ	685	27400	40	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը

9	33671113	Սալբուտամոլ ցողացիր 10մգ		Սալբուտամոլ (սալբուտամոլ սուլֆատ) salbutamol (salbutamol sulfate) ցողացիր շնչառման, դեղաչափավորված 100մկգ/դեղաչափ, 200 դեղաչափ	սրվակ	1400	56000	40	ՔՆոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
19	33621720	Բիսապրոլոլ 5մգ		Բիսոպրոլոլ bisoprolol դեղահատ 5մգ	դեղահատ	7.9	11850	1500	ՔՆոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
20	33621140	Կլոպիդոգրել 75մգ		Կլոպիդոգրել clopidogrel դեղահատ 75մգ	դեղահատ	88	88000	1000	ՔՆոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
21	33691224	Միլդրոնատ 10% 5.0/ Մելդրոնիում		Միլդրոնատ 10% 5.0/ Մելդրոնիում	սրվակ	380	38000	100	ՔՆոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
22	33620000	Դոբուտամին 250մգ/5մլ		Դոբուտամին dobutamine դեղափոշի լիոֆիլացված,կաթիլաներ արկման լուծույթի 250մգ սրվակ	սրվակ	4175	83500	20	ՔՆոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
23	33621420	Ատորվաստատին 10մգ		Ատորվաստատին atorvastatin դեղահատ 10մգ	դեղահատ	19	24700	1300	ՔՆոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
24	33621220	Ֆերրում-լեկ 2մլ		Ֆերրում-լեկ 2մլ	սրվակ	690	27600	40	ՔՆոյեմբերյան, Գ.Նժդեհի	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբ

									15		երի 15
26	33661150	Գենտամիցին 80մգ/2մլ		Գենտամիցին gentamicin լուծույթ ներարկման 80մգ/մլ, 2մլ	սրվակ	63	3150	50	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
27	33691188	Մեքսիդոլ 250մգ/5.0/ Էթիլմեթիլհիդրոքսիպիրիդին		Մեքսիդոլ 250մգ/5.0/ էթիլմեթիլհիդրոքսիպիրիդին ethylmethylhydroxypiridine succinate	սրվակ	620	62000	100	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
28	33631380	Միդոկալմ 100մգ/1մլ 5.0/ Տոլպերիզոն		Տոլպերիզոն tolperisone դեղահատ 150մգ	սրվակ	558.56	27928	50	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
30	33600000	Բիսակոդիլ մոմիկ 10մգ		Բիսակոդիլ bisacodyl մոմիկներ ուղիղաղիքային 10մգ	հատ	49.6	2480	50	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
32	33631330	Վիշնևսկի քսուք 30գ		Վիշնևսկի քսուք 30գ	հատ	312.57	3125.7	10	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
33	33600000	Լինեքս		Լինեքս	դեղապատիճ	47	9400	200	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
34	33600000	Կրեոն 10000		Կրեոն 10000	դեղահատ	101	10100	100	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
35	33600000	Էսենցիալե 5.0		Էսենցիալե 5.0	սրվակ	630	31500	50	Ք.	Համաձ	Մինչև

									Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	այն պատվերի	սույն տարվա դեկտեմբերի 15-ը
38	33600000	Հեպտրալ 5.0		Հեպտրալ 5.0	սրվակ	2700	54000	20	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
39	33620000	Ակտովեգին 5.0		Ակտովեգին 5.0	սրվակ	1015	50750	50	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
40	33610000	Սմեկտա		Սմեկտա	հատ	122	6100	50	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
41	33610000	Ֆոսֆալյուգել		Ֆոսֆալյուգել	հատ	140	14000	100	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
46	33651163	Ամիկացինի սուլֆատ լուծույթ կաթիլաներարկման 500մգ/2մլ		Ամիկացին amikacin, լուծույթ ներարկման /կաթիլաներարկման, 500մգ/2մլ, 2մլ	սրվակ	2440	24400	10	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
47	33600000	Արգինինի հիդրոքլորիդ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 210,7 մգ/մլ, 100 մլ		Արգինին arginine խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 210,7մգ/մլ, 20մլ	հատ	42372	84744	20	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
48	33621761	Ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի		Ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրոքսիդ	դեղահատ	27.8	5560	200	Ք. Նոյեմբերյան	Համաձայն	Մինչև սույն

		հիդրոքսիդ 150մգ-30,39 մգ		acetylsalicylic acid, magnesium hydroxide դեղահատ 150մգ+30,39մգ					ան, Գ.Նժդեհի 15	պատվե րի	տարվա դեկտեմբ երի 15-ը
49	33600000	Իմիպենեմի մոնոհիդրատ, ցիլաստատին նատրիում , դեղափոշի կաթիլաներարկման լուծույթի 500մգ+500մգ		Իմիպենեմ, ցիլաստատին imipenem, cilastatin դեղափոշի կաթիլաներարկման լուծույթի 500մգ+500մգ	սրվակ	3950	118500	30	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
53	33651116	Ցեֆազոլին, դեղափոշի ներարկման լուծույթի 1000 մգ		Ցեֆազոլին cefazolin, դեղափոշի ներարկման լուծույթի, 1000մգ	սրվակ	152	7600	50	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
54	33651123	Ցեֆոտաքսիմ նատրիում cefotaxime (cefotaxime sodium) դեղափոշի ն/ե և մ/մ ներարկման լուծույթի 1000 մգ		Ցեֆոտաքսիմ cefotaxime դեղափոշի ներարկման լուծույթի, 1000մգ	սրվակ	400	8000	20	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
56	33600000	Մարդու ալբումինի ներերակային ներարկման լուծույթ 20% 50մլ		Ալբումին մարդու albumin human լուծույթ ն/ե կաթիլաներարկման 200մգ/մլ, 50մլ	սրվակ	15060	753000	50	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
64	33661133	Լևոդոպա կարբիդոպա 250 մլ		Կարբիդոպա, լևոդոպա carbidopa, levodopa, դեղահատ, 25մգ+250մգ,	դեղահատ	86	86000	1000	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը
65	33651118	Ցեֆտրիաքսոն 1.0		Ցեֆտրիաքսոն ceftriaxone դեղափոշի ներարկման լուծույթի, 1000մգ	սրվակ	145	290000	2000	Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբ

69	33600000	Լակտոբացիլուս ացիդոֆիլուս 3 Մլրդ, Լակտոբացիլուս ռամնոզուս GG-1Մլրդ, Բիֆիդոբակտերիում լոնգում -1Մլրդ, Բիֆիդոբակտերիում բիֆիդում -1Մլրդ, Բիֆիդոբակտերիում լակտիս -1 Մլրդ, Ինուլին ֆրուկտոոլիգոսախարիդներ-150 մգ		Լակտոբացիլուս ացիդոֆիլուս 3 Մլրդ, Լակտոբացիլուս ռամնոզուս GG-1Մլրդ, Բիֆիդոբակտերիում լոնգում -1Մլրդ, Բիֆիդոբակտերիում բիֆիդում -1Մլրդ, Բիֆիդոբակտերիում լակտիս -1 Մլրդ, Ինուլին ֆրուկտոոլիգոսախարիդներ-150 մգ	դեղապատիճ	173	8650	50	15 Ք. Նոյեմբերյան, Գ.Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մինչև սույն տարվա դեկտեմբերի 15-ը

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

** եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" << օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ

<< Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>>ՓԲԸ

Ք.Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15

<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկ>>ՓԲԸ Լոռու մարզ Նոյեմբերյան համայնքի Գ/Հ

Հ/Հ 07404792

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ»ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2

Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ

Հ/Հ 1570005065330100

ՀԿՀ 01222567

Տնօրեն՝ Ա.Ասատրյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«26» փետրվար 2018 թ. կնքված
<<ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/4>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
3	33671114	Ամինոֆիլին 2,4% 5,0		1860	9300	16740	24180	31620	39060	46500	53940	61380	68820	76260	**76260**	
4	33671114	Ամինոֆիլին 0,15			1155	2310	3465	4620	5775	6930	8085	9240	10395	11550	**11550**	
5	33671115	Սուլֆոկամֆոկային 10% 2մլ			1677	2795	4472	5590	7267	8385	10062	11180	12857	13975	**13975**	
7	33671125	Ամբրոքսոլ օշարակ 15մգ/5մլ 100մլ			2740	5480	8220	10960	13700	16440	19180	21920	24660	27400	**27400**	

9	33671113	Սալբուտամոլ ցողացիր 10մգ			5600	11200	16800	22400	28000	33600	39200	44800	50400	56000	**56000**
19	33621720	Բիսապրոլոլ 5մգ			1185	2370	3555	4740	5925	7110	8295	9480	10665	11850	**11850**
20	33621140	Կլոպիդոգրել 75մգ			8800	17600	26400	35200	44000	52800	61600	70400	79200	88000	**88000**
21	33691224	Միլդրոնատ 10% 5.0/ Մելդրոնիում			3800	7600	11400	15200	19000	22800	26600	30400	34200	38000	**38000**
22	33620000	Դոբուտամին 250մգ/5մլ			41750	41750	41750	41750	41750	41750	41750	41750	83500	83500	**83500**
23	33621420	Ատորվաստատին 10մգ			2470	4940	7410	9880	12350	14820	17290	19760	22230	24700	**24700**
24	33621220	Ֆերրում-լեկ 2մլ			2760	5520	8280	11040	13800	16560	19320	22080	24840	27600	**27600**
26	33661150	Գենտամիցին 80մգ/2մլ			630	630	1260	1260	1260	1890	1890	2520	2520	3150	**3150**
27	33691188	Մեքսիդոլ 250մգ/5.0/ Էթիլմեթիլհիդրոքսիպիրիդին			6200	12400	18600	24800	31000	37200	43400	49600	55800	62000	**62000**
28	33631380	Միդոկալմ 100մգ/1մլ 5.0/ Տոլպերիզոն			5585.6	5585.6	5585.6	11171.2	11171.2	11171.2	16756.8	16756.8	22342.4	27928	**27928**
30	33600000	Բիսակոդիլ մոմիկ 10մգ			496	496	992	992	1488	1488	1984	1984	2480	2480	**2480**
32	33631330	Վիշնևսկի քսուք 30գ			312.57	625.14	937.71	1250.28	1562.85	1875.42	2187.99	2500.56	2813.13	3125.7	**3125.7**
33	33600000	Լինեքս			940	1880	2820	3760	4700	5640	6580	7520	8460	9400	**9400**

34	33600000	Կրեոն 10000			1010	2020	3030	4040	5050	6060	7070	8080	9090	10100		
35	33600000	Էսենցիալե 5.0			3150	6300	9450	12600	15750	18900	22050	25200	28350	31500	31500	
38	33600000	Հեպտրալ 5.0					27000	27000	27000	27000	54000	54000	54000	54000	54000	
39	33620000	Ակտովեգին 5.0			5075	10150	15225	20300	25375	30450	35525	40600	45675	50750	50750	
40	33610000	Սմեկտա			610	1220	1830	2440	3050	3660	4270	4880	5450	6100	6100	
41	33610000	Ֆոսֆալյուզել			1400	2800	4200	5600	7000	8400	9800	11200	12600	14000	14000	
46	33651163	Ամիկացինի սուլֆատ լուծույթ կաթիլաներարկման 500մգ/2մլ			2440	4880	7320	9760	12200	14640	17080	19520	21960	24400	24400	
47	33600000	Արգինինի հիդրոքլորիդ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 210.7 մգ/մլ, 100 մլ			8474.4	16948.8	25423.2	33897.6	42372	50846.4	59320.8	67795.2	76269.6	84744	84744	
48	33621761	Ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ 150մգ+30,39 մգ			556	1112	1668	2224	2780	3336	3892	4448	5004	5560	5560	
49	33600000	Իմիպենեմի մոնոհիդրատ, ցիլաստատին նատրիում , դեղափոշի կաթիլաներարկման լուծույթի 500մգ+500մգ			11850	23700	35550	47400	59250	71100	82950	94800	106650	118500	118500	

53	33651116	Ցեֆազոլին, դեղափոշի ներարկման լուծույթի 1000 մգ			760	1520	2280	3040	3800	4560	5320	6080	6840	7600	**7600**
54	33651123	Ցեֆոտաքսիմ նատրիում cefotaxime (cefotaxime sodium) դեղափոշի ն/ե և մ/մ ներարկման լուծույթի 1000 մգ			800	1600	2400	3200	4000	4800	5600	6400	7200	8000	**8000**
56	33600000	Մարդու ալբումինի ներերակային ներարկման լուծույթ 20% 50մլ			75300	150600	225900	301200	376500	451800	527100	602400	677700	753000	**753000**
64	33661133	Լևոդոպա կարբիդոպա 250 մլ			8600	17200	25800	34400	43000	51600	60200	68800	77400	86000	**86000**
65	33651118	Ցեֆտրիաքսոն 1,0				14500	43500	87000	130500	174000	203000	232000	261000	290000	290000
69	33600000	Լակտոբացիլուս ացիդոֆիլուս 3 Մլրդ, Լակտոբացիլուս ռամնոզուս GG-1Մլրդ, Բիֆիդոբակտերիում լոնգում -1Մլրդ, Բիֆիդոբակտերիում բիֆիդում -1Մլրդ, Բիֆիդոբակտերիում լակտիս -1 Մլրդ, Ինուլին ֆրուկտոօլիգոսախարի դներ-150 մգ			865	1730	2595	3460	4325	5190	6055	6920	7785	8650	**8650**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

բյանի անվան Նոյեմբերյանի
ԲԿ>>ՓԲԸ
երյան, Գ. Նժդեհի 15
ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ
եմբերյանի մասնաճյուղ Հ/Հ
155140084000
ՀՀ՝ 07404792

որագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ»ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա.Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

01222567
«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»
"НАТАЛИ ФАРМ"
"NATALI FARM"